# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 մարտի 2025 թվականի N 57-Ա

## ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածներով

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Մեծամոր համայքի ավագանու 7-րդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր սահմանել 2025 թվականի ապրիլի 18-ը՝ ժամը 16:00-ն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՆՈՒՆԵ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՇՄԱՎՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**Համայնքի ղեկավար՝** **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 մարտի 2025 թվականի N 56-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 186-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 15-ի «Մեծամոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 186-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն:

2.Որոշման N 25 և N 26 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1-2 հավելվածների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՆՈՒՆԵ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՇՄԱՎՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՄՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**Համայնքի ղեկավար՝** **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված N 26

ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
ավագանու 2024 թվականի նոյեմբերի 15 -ի
N 186 -Ա որոշման

Հավելված N 1

ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
ավագանու 2025 թվականի փետրվարի 21-ի
N 19-Ա որոշման

Հավելված N 1

ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
ավագանու 2025 թվականի մարտի 21-ի
N 56-Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄԵԾԱՄՈՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 112

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/Հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար) | ՀԱՎԵԼԱ ՎՃԱՐԸ | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 400000 | 0 | 400000 |
| 2-3 | Փոխտնօրեն | 2 | 320000 | 0 | 640000 |
| 4-7 | Տնօրենի օգնական | 4 | 290000 | 0 | 1160000 |
| 8 | Գլխավոր հաշվապահ | 1 | 270000 | 0 | 270000 |
| 9 | Հաշվապահի օգնական | 1 | 160000 | 0 | 160000 |
| 10 | Հաշվետար | 1 | 150000 | 0 | 150000 |
| 11 | Գանձապահ | 1 | 140000 | 0 | 140000 |
| 12-13 | Ճարտարագետ | 2 | 210000 | 0 | 420000 |
| 14 | Կադրերի տեսուչ | 1 | 160000 | 0 | 160000 |
| 15 | Պահեստապետ | 1 | 190000 | 0 | 190000 |
| 16 | Տնտեսվար | 1 | 120000 | 0 | 120000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 17-18 | Գործավար | 2 | 160000 | 0 | 320000 |
| 19-20 | Հավաքարար | 2 | 110000 | 0 | 220000 |
| 21-24 | Պահակ | 4 | 105000 | 0 | 420000 |
| 25-28 | Հատուկ տեխնիկա սպասարկող վարորդ | 4 | 275000 | 0 | 1100000 |
| | Ընդամենը | 28 | 3060000 | | 5870000 |
| ՄԵԾԱՄՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՂԲԱՀԵՌԱՑՄԱՆ ՏԵՂԱՄԱՍ | | | | | |
| 29 | Տեղամասի պետ | 1 | 250000 | 0 | 250000 |
| 30-39 | Բանվոր | 10 | 145000 | 0 | 1450000 |
| 40-45 | Վարորդ | 6 | 145000 | 0 | 870000 |
| 46 | Ավտո մեխանիկ | 1 | 150000 | 0 | 150000 |
| | Ընդամենը | 18 | 690000 | | 2720000 |
| ՇԻՆՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՏԵՂԱՄԱՍ | | | | | |
| 47 | Տեղամասի պետ | 1 | 230000 | 0 | 230000 |
| 48-49 | Մեխանիկ | 2 | 110000 | 0 | 220000 |
| 50 | Էլ.եռակցող | 1 | 180000 | 0 | 180000 |
| 51-53 | Փականակագործ | 3 | 140000 | 0 | 420000 |
| 54-67 | Բանվոր | 14 | 130000 | 0 | 1820000 |
| 68 | Էլեկտրիկ | 1 | 110000 | 0 | 110000 |
| 69-70 | վարորդ | 2 | 175000 | 0 | 350000 |
| | Ընդամենը | 24 | 1075000 | | 3330000 |
| ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՏԵՂԱՄԱՍ | | | | | |
| 71-72 | Խմբի ղեկավար | 2 | 250000 | 0 | 500000 |
| 73-82 | Բանվոր | 10 | 135000 | 0 | 1350000 |
| 83-88 | Այգեպան | 6 | 135000 | 0 | 810000 |
| 89-90 | Ջրվոր | 2 | 105000 | 0 | 210000 |
| | Ընդամենը | 20 | 625000 | 0 | 2870000 |
| ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՄԱՍ | | | | | |
| 91-93 | Էլեկտրիկ-հսկիչ | 3 | 270000 | 0 | 810000 |
| 94-96 | Էլեկտրիկ | 3 | 180000 | 0 | 540000 |
| 97-98 | Բանվոր | 2 | 130000 | 0 | 260000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 99-100 | Վարորդ | 2 | 150000 | 0 | 300000 |
| | Ընդամենը | 10 | 730000 | | 1910000 |
| | | | | | |
| ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՏԵՂԱՄԱՍ | | | | | |
| 101 | Բնակարանային շահագործման տեղամասի (ԲՇՏ) պետ | 1 | 160000 | 0 | 160000 |
| 102 | Օպերատոր | 1 | 110000 | 0 | 110000 |
| | Ընդամենը | 2 | 270000 | | 270000 |
| ԳՅՈՒՂԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԱՂԲԱՀԵՌԱՑՄԱՆ ՏԵՂԱՄԱՍ | | | | | |
| 103 | Ուղության պետ 1 | 1 | 260000 | 0 | 260000 |
| 104 | Ուղության պետ 2 | 1 | 260000 | 0 | 260000 |
| 105 | Ուղության պետ 3 | 1 | 260000 | 0 | 260000 |
| | Ընդամենը | 3 | 780000 | | 780000 |
| ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | | |
| 106-107 | Գերեզմանատան վերակացու | 2 | 105000 | 0 | 210000 |
| 108-110 | Գերեզմանատան պահակ | 3 | 105000 | 0 | 315000 |
| | Ընդամենը | 5 | 210000 | | 525000 |
| ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ | | | | | |
| 111 | Բաժնի պետ | 1 | 105500 | 0 | 105500 |
| 112 | Հավաքարար | 1 | 105000 | 0 | 105000 |
| | Ընդամենը | 2 | 210500 | | 210500 |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ | | 112 | 7650500 | | 18485500 |

Աշխատակազմի քարտուղար՝ Մ. Հովհաննիսյան

Հավելված N 25

ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
ավագանու 2024 թվականի նոյեմբերի 15 -ի
N 186-Ա որոշման

Հավելված N 1

ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
ավագանու 2025 թվականի փետրվարի 21-ի
N 19-Ա որոշման

Հավելված N 1

ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
ավագանու 2025 թվականի մարտի 21-ի
N 56-Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄԵԾԱՄՈՐԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 29

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/Հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար) | ՀԱՎԵԼԱՎՃԱՐԸ | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 250000 | 0 | 250000 |
| 2 | Փոխտնօրեն | 1 | 200000 | 0 | 200000 |
| 3 | Ուսմասվար | 1 | 135200 | 0 | 135200 |
| 4 | մեթոդիստ | 1 | 125000 | 0 | 125000 |
| 5 | Հաշվապահ | 1 | 125000 | 0 | 125000 |
| 6 | Բուժքույր | 1 | 125000 | 0 | 125000 |
| 7-8 | Գործավար | 2 | 125000 | 0 | 250000 |
| 9 | Մարզիչ ֆուտբոլի | 1 | 125000 | 0 | 125000 |
| 10 | Մարզիչ թեթև աթլետիկայի | 1 | 125000 | 0 | 125000 |
| 11 | Մարզիչ | 1 | 125000 | 0 | 125000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | բռնցքամարտի | | | | |
| 12 | Մարզիչ բասկետբոլի | 1 | 125000 | 0 | 125000 |
| 13-14 | Մարզիչ հունահռոմեական ըմբշամարտի | 2 | 125000 | 0 | 250000 |
| 15-16 | Հանդերձապահ | 2 | 125000 | 0 | 250000 |
| 17 | Շախմատի ուսուցիչ/մարզիչ | 1 | 125000 | 0 | 125000 |
| 18 | Հավաքարար | 1 | 125000 | 0 | 125000 |
| 19 | Մարզիչ կարատեի | 1 | 125000 | 0 | 125000 |
| 20 | Մարզիչ ձյուդոյի | 1 | 125000 | 0 | 125000 |
| 21 | Տնտեսվար | 1 | 125000 | 0 | 125000 |
| 22-24 | Պահակ | 3 | 125000 | 0 | 375000 |
| 25-28 | Հավաքարար | 4 | 125000 | 0 | 500000 |
| 29 | Այգեպան | 1 | 125000 | 0 | 125000 |
| Ընդամենը | | 29 | 2815200 | 0 | 3815200 |

**Աշխատակազմի քարտուղար՝** **Մ.Հովհաննիսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 մարտի 2025 թվականի N 55-Ա

## ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱՊԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՀՈՂԱՄԱՍ ԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով,հաշվի առնելով գերեզմանատան տարածք չլինելու հանգամանքը և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն գնելու Մեծամոր համայնքի Նորապատ բնակավայրում գտնվող քաղաքացիներին սեփականություն հանդիսացող 04-075-0144-0001կադաստրային ծածկագրերով (վկայական 11032025-04-0056) հողամասը՝ 2 900 000 (երկու միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ արժեքով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՆՈՒՆԵ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՇՄԱՎՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**Համայնքի ղեկավար՝** **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 մարտի 2025 թվականի N 54-Ա

### ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումներով և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնություն տալ Մեծամոր համայնքի մասնակցությանը Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից գործադրվող Տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին:

2. Համաձայնություն տալ դրամաշնորհային մրցույթին ներկայացվող ծրագրային հայտերի և առաջարկների հաստատման դեպքում Մեծամոր համայնքի 2025 թ. բյուջեից կատարել համապատասխան համաներդրումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՆՈՒՆԵ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՇՄԱՎՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**Համայնքի ղեկավար՝** **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 մարտի 2025 թվականի N 53-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄԵԾԱՄՈՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 165-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի «Մեծամորի բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» N 165–Ա որոշման մեջ կատարել փոփոխություն:

2. Որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՆՈՒՆԵ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՇՄԱՎՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՄՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**Համայնքի ղեկավար՝** **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

| | |
|---|---|
| Կազմվեց 21.03.2025 թ-ին 8 թերթից<br>Հաստատված՝<br>Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 21-ի N 53-Ա որոշմամբ<br><br>Մեծամոր համայնքի ղեկավար՝<br><br>Վահրամ Խաչատրյան<br><br>------------------------------------------ | Տպագրված է ընդամենը 2 օրինակից<br>Օրինակ _____<br>Գրանցված է՝<br>Հայաստան Հանրապետության Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից՝ ___________<br><br>գրանցման համար ____________________________<br><br>վկայական ___________________________<br><br>ՀՎՀՀ՝______________________<br><br>______________________գրանցված կանոնադրության Թիվ _______փոփոխությունը գրանցված է Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից, աշխատակից՝<br><br>___________________________________<br><br>«-------------»-------------------------------20 թ. |

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄԵԾԱՄՈՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

**Հավելված**
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 13-ի
թիվ 11 նիստի N 165-Ա որոշմամբ

**Հավելված**
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
ավագանու 2025 թվականի մարտի 21-ի
թիվ N 53-Ա որոշմամբ

## 1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**1.1** Հաստատությունը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի «Մեծամոր բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետև՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավարի 14.11.2003թ. թիվ 3-Ն որոշմամբ համայնքի ենթակայության «Բնակարանային տնտեսություն» (հաշվառման հ. 83180.00955, հաշվառման օրը՝ 22.02.2002թ. վկայական 01Բ000324) «Կանաչապատում ոռոգում» (հաշվառման հ 83.180.00948, հաշվառման օրը՝ 25,01,2002թ, վկայական 01Բ 000 323) «Բնակարանային կոմունալ տնտեսություն» (հաշվառման հ, 83,180,01008, հաշվառման օրը ՝ 10.01.2002թ, վկայական 01Բ 0008777), հիմնարկների միաձուլման ճանապարհով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է նրանց իրավահաջորդը միաձուլման որոշման և փոխանցման ակտին համապատասխան: Կազմակերպությունը ստեղծվել է առանց ժամկետային սահմանափակման:

**1.2** Կազմակերպությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, քաղաքացիական և աշխատանքային օրենսգրքերով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Գնումների մասին» օրենքներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքներով, Հիմնադրի որոշումներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

**1.3** Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքն է (այսուհետ՝ Համայնք)՝ ի դեմս Համայնքի ավագանի (այսուհետ՝ Հիմնադիր), իսկ հիմնադրի կողմից, որպես համայնքային կազմակերպության կառավարումն իրականցնող լիազորված մարմին հանդես է գալիս Մեծամոր համայնքի ղեկավարը (այսուհետ՝ Համայնքի ղեկավար):

**1.4** Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրկանացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

**1.5** Կամզակերպությունը այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն Հիմնադրի որոշմամբ:

**1.6** Կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ, որոնք ստեղծվում են Հիմնադրի որոշմամբ և օրենքով սահմանված կարգով ենթակա են հաշվառման իրավաբանական անձաց գրանցումն իրականացնող մարմնի կողմից:

**1.7** Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության Զինանշանի պատկերով իր անվանմամբ կնիք, տարբերանշան, խորհրդանիշեր, ձևաթղթեր և ՀՀ օրենսդրությամբ չարգելված անհատականացման այլ միջոցներ:

**1.8** Կազմակերպությունը ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի նախահաշիվ:

**1.9** Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում Հիմնադրի պարտավորությունների համար: Հիմնադիրը պատասխանատվություն է կրում մինչև Կազմակերպության պետական գրանցումը ծագած՝ Կազմակերպության ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:

**1.10** Կազմակերպության անվանումն է՝

1)Հայերեն լրիվ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի «Մեծամորի բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

2)Հայերեն կրճատ՝ ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի «Մեծամորի բարեկարգում» ՀՈԱԿ:

3)Ռուսերեն լրիվ՝ общинная не коммерческая организация «Благоустройство Мецамора» Мецаморской общины Армавирской области Республики Армения.

4)Ռուսերեն կրճատ՝ ОНКО «Благоустройство Мецамора» Мецаморской общины Армавирской области РА.

5)Անգլերեն լրիվ՝ «Metsamor improvement» of Metsamor community Armavir region Republic of Armenia community non-commerical organization.

6)Անգլերեն կրճատ՝ «Metsamor improvement» of Metsamor community Armavir region of RA CNCO.

**1.11** Կազմակերպության գտնվելու վայրն է Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, Վարչական կենտրոն շենք 1:

## 2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

**2.1** Կազմակերպության գործունեության հիմնական նպատակն է՝ Մեծամոր համայնքի բարեկարգման աշխատանքների կատարումը:

**2.2** Կազմակերպության գործունեության առարկան է՝

1) Համայքնի բնակավայրերում աղբահանության աշխատանքների իրականացում,
2) Համայնքի բնակավայրերում սանիտարական մաքրման աշխատանքների իրականացում,
3)Համայնքի բնակավայրերում անձրևատար ցանցերի ընթացիք վերանորագմում, շահագործում և պահպանություն,
4)Համայնքի բնակավայրերում ոռոգման ջրի համակարգերի կառուցապատում, վերանորագմում, շահագործում և պահպանություն,

5)Համայնքի գյուղական բնակավայրերի խմելաջրի համակարգի կառուցապատում, վերանորոգում, շահագործում և պահպանություն,
6) Համայնքի բնակավայրերում աղբահանության և խմելու ջրի վարձերի հավաքագրում,
7) Համայնքի բնակավայրերում բազմաբնակարանային բնակելի և ոչ բնակելի, ինչպես նաև Համայնքին պատկանող բնակելի և ոչ բնակելի շենքերի կոյուղատարերի վերանորոգում,
8)Համայնքի բազմաբնակարանային բնակելի շենքերի վերելակների ընթացիք վերանորոգում,
9) Համայնքի քաղաքային բնակավայրերի բնակիչների փաստացի բնակության վայրի տվյալների հաշվառում և տեղեկանքների տրամադրում,
10)Համայնքի բնակավայրերի գերեզմանատների պահպանության աշխատանքների իրականացում:

## 3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

**3.1** Կազմակերպության կառավարումն իրականացնում են Հիմնադիրը, Համայնքի ղեկավարը և Կազմակերպության գործադիր մարմինը՝ տնօրենը: Համայնքի ղեկավարը, Կազմակերպության գործադիր մարմինը և նրա տեղակալը Կազմակերպության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իրենց կողմից ներկայացվող Կազմակերպության:

**3.2** Հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

**3.3 Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝**

ա) Կազմակերպության հիմնադրումը,

բ) Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների՝ այդ թվում նրա կողմից իրականցվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

գ) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,

դ) Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը:

ե) Հաստատում է Կազմակերպության կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

**3.4** Համայնքի ղեկավարը իրականցնում է Կազմակերպությունում ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց ոչ պատշաճ կատարման համար:

**3.5 Համայնքի ղեկավարը՝**

ա) Սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

բ) իրականացնում է Կազմակերպության գործունեության վերահսկողությունը,

գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության գործադիր մարմնի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները,

դ) լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները,

ե) վերահսկողություն է իրականցնում Կազմակերպությանը ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

զ) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, Հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում՝ համաձայնություն է տալիս նրա գույքը խոտանման կամ վարձակալության հանձնման համար,

է) հաստատում է Կազմակերպության տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը, հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,

ը) Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,

թ) Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,

ժ) իրականացնում է օրենքով, Հիմնադրի որոշումներով նախատեսված այլ գործառույթներ:

**3.6** Կազմակերպության գործադիր մարմինը՝

ա) Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենն, որին պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է Համայնքի ղեկավարը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Կազմակերպության տնօրենն օրենքով Հիմնադրի ու Համայնքի ղեկավարը որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ ՀՀ օրենսդրությամբ, Հիմնադրի կամ Համայնքի ղեկավարը որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար,

բ) Տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որը Հիմնադրի անունից ստորագրում է Համայնքի ղեկավարը,

գ) Կազմակերպության գործադիր մարմնում նշանակված անձը պետք է բավարարի օրենքով նախատեսված պահանջներին,

դ) Կազմակերպության տնօրենը պետք է ունենա բարձրագույն կրթություն և չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական ու ստեղծագործական աշխատանքից,

ե) Տնօրենի պաշտոնին նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանն պատճառած վնասի համար,

զ) Կազմակերպության գործադիր մարմնին նշանակված անձը պարտավոր է չկատարել Հիմնադրի, Համայնքի ղեկավարի օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

**3.7** Կազմակերպության տնօրենը.

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ,

բ) ՀՀ օրենսդրությամբ, Հիմնադրի ու Համայնքի ղեկավարի որոշումներով ու սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

գ) տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

դ) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է Կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ ու նշանակում կարգապահական տույժեր: Կազմակերպության կազմում հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ ստեղծելու դեպքում աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է դրանց ղեկավարներին (տնօրեններին),

ե) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

զ) Կատարում է աշխատանքի բաշխում,

է)սահմանում է Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

ը) օրենքով ու սույն կանոնադրությամբ սահմանված լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

թ) ապահովում է Կազմակերպության գործունեության մասին համապատասխան հաշվետվությունների կազմումը և դրանք սահմանված կարգով ներկայացնում Համայնքի ղեկավարին,

ժ) իրականցնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

## 4 . ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

**4.1** Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է Կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում Համայնքի ղեկավարի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

**4.2** Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, Համայնքի ղեկավարի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

**4.3** Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է Կազմակերպությունը:

**4.4** Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

**4.5** Հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

Հիմնադիրը իրավունք ունի հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը:

**4.6.** Կազմակերպությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, հանձնելու անհատույց օգտագործման:

Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը Համայնքի անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ Հիմնադրի կամ Համայնքի ղեկավարի որոշմամբ:

Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ Հիմնադրի կամ Համայնքի ղեկավարի կողմից սահմանված դեպքերի:

Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացած եկամուտները Կազմակերպության սեփականությունն են:

Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հանդիսանում են Հիմնադրի սեփականությունը:
**4.7** Հիմնադրի կողմից գույքը Կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ Հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարացնելու կամ փոփոխելու համար:
**4.8** Հիմնադրի կողմից Կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ Կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:
**4.9** Կազմակերպության ֆինանսական միջոցների հիմնական աղբյուրն են հանդիսանում ՀՀ պետական և համայնքային բյուջեներից հատկացումները, վճարովի ծառայություններից և սույն կանոնադրությամբ նախատեսված ու ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեության արդյունքում գոյացած սեփական միջոցները, իրավաբանական և ֆիզիկական անձանց կամավոր ներդրումները ու հանգանակությունները, տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված դրամաշնորհները: Տարբեր աղբյուրներից մուտք եղած բոլոր միջոցները մտնում են Կազմակերպության եկամուտների մեջ և կազմում նրա ֆինանսական միջոցների միասնական ֆոնդը:
**4.10** Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար: Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է Հիմնադիրը:
**4.11** Կազմակերպության կողմից իր կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով:
**4.12** Կազմակերպության կողմից այլ ծառայություններ, աշխատանքներ կարող են մատուցվել միայն «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով:
**4.13** Կազմակերպության հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարվում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:
**4.14** Կազմակերպությունը Հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:
**4.15** Կազմակերպության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հիմնադիրը, Հիմնադրի կողմից լիազորված համայնքային մարմինը:
**4.16** Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման) լիազոր մարմնի կողմից ընտրված աուդիտորի կողմից:

## 5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

**5.1** Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել Հիմնադրի որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դատական կարգով:
**5.2** Կազմակերպությունը լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, մնացած գույքն ուղղվում է Համայնքի բյուջե:

**5.3** Համայնքային Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 մարտի 2025 թվականի N 52-Ա

## ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14,3-րդ հոդվածի 30-րդ մասի պահանջներով, և հիմք ընդունելով ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2/փ-73 դրական եզրակացությունը ինչպես նաև Մեծամոր համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Մեծամոր համայքի Մեծամոր քաղաքում գտնվող 04-003-0101-0108 կադաստրային ծածկագրով 0,85658 հա մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում վերգետնյա 16 հարկանի (նկուղային հարկ) բազմաֆունկցիոնալ համալիր (բազմաբնակարան բնակելի շենք) կառուցելու համար Մեծամոր քաղաքի գլխավոր հատակագծի տեքստային մասում փոփոխություն կատարելու և շենքերի սահմանված 1-2 հարկայնությունը վերգետնյա 1-16 հարկայնության (նկուղային հարկ) փոխելու առաջարկության վերաբերյալ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կարծիքների ամփոփ տեղեկանքն ու դրական եզրակացությունը:

2. Նշված փոփոխությունը արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Մեծամոր քաղաքի գլխավոր հատակագծում սույն որոշմամբ բխող դրույթների փոփոխությունները :

3. Սույն որոշման քաղվածքը տրամադրել ՀՀ քաղաքաշինական կոմիտեին:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՆՈՒՆԵ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՇՄԱՎՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՄՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**Համայնքի ղեկավար՝ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 մարտի 2025 թվականի N 51-Ա

### ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ 10 (ՏԱՍ) ԱՆՈՒՆ ԳՈՒՅՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ կետով.

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել սեփականության իրավունքով ձեռքբերված 10 (տաս) անուն գույքը և ընդգրկել հիմնական միջոցների ցուցակում՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՆՈՒՆԵ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՇՄԱՎՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՄՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**Համայնքի ղեկավար՝** **Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
ավագանու 2025 թվականի մարտի
21-ի N 051- Ա որոշման

ՑԱՆԿ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ 10 (ՏԱՍ) ԱՆՈՒՆ ԳՈՒՅՔԻ

| Հ/Հ | Ձեռք բերման ամսաթիվ | անվանում | քանակ | գինը | գումարը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 21.02.2025թ. | Թուղթ մանրացնող սարք | 1 | 135000 | 135000 |
| 2 | 26.02.2025թ. | Ղեկավարի սեղան կողադիր | 1 | 550000 | 550000 |
| 3 | 26.02.2025թ. | Գրապահարան | 1 | 400000 | 400000 |
| 4 | 10.03.2025թ. | Ուլտրաձայնային հոսքաչափ DN150 | 11 | 414000 | 4554000 |
| 5 | 10.03.2025թ | Ուլտրաձայնային հոսքաչափ DN125 | 7 | 403200 | 2822400 |
| 6 | 10.03.2025թ | Ուլտրաձայնային հոսքաչափ DN100 | 7 | 393600 | 2755200 |
| 7 | 10.03.2025թ | Ուլտրաձայնային հոսքաչափ DN80 | 1 | 384000 | 384000 |
| 8 | 10.03.2025թ | Ուլտրաձայնային հոսքաչափ DN65 | 1 | 373200 | 373200 |
| 9 | 14.03.2025թ. | Բազմաֆունկցիոնալ տպիչ սարք HP LJ Pro MFP 4103dw (2Z627A) | 3 | 210000 | 630000 |
| 10 | 14.03.2025թ. | Լազերային տպիչ PAMTUM P2500NW | 5 | 44000 | 220000 |

Աշխատակազմի քարտուղար՝ Մ. Հովհաննիսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 մարտի 2025 թվականի N 50-Ա

## ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-ԻՆ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՀՈԱԿ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Քաղաքացիական օրենսգրքի «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Մեծամոր համայնքի կողմից ձեռք բերված գույքը նվիրաբերել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի առողջապահություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն հավելվածի:

2. Նվիրաբերած գույքը հաշվառել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի առողջապահություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հիմնական միջոցների ցանկում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՆՈՒՆԵ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՇՄԱՎՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**Համայնքի ղեկավար՝** **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
ավագանու 2025 թվականի մարտի
21-ի N 50-Ա որոշման

# ՑԱՆԿ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-ԻՆ ՆՎԻՐՏՎՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ

| Հ/Հ | Ձեռք բերման ամսաթիվ | Անվանում | Չափման միավոր | Քանակ | Գինը | Գումարը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 19.02.2025թ. | Օդորակիչ | հատ | 1 | 300000 | 300000 |
| 2 | 05.03.2025թ. | Պատուհան | քառ.մ | 19.8 | 31565.66 | 625000 |
| 3 | 05.03.2025թ. | Դուռ | քառ.մ | 2.1 | 35714.29 | 75000 |

Աշխատակազմի քարտուղար՝ Մ. Հովհաննիսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 մարտի 2025 թվականի N 49-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով 2025 թվականի փետրվարի 20-ին կայացած հանրային քննարկման արձանագրությունը, ինչպես նաև Մեծամոր համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Տալ նախնական համաձայնություն Հայաստանի Հանրապետության Տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով «ԼԻԼԱՆԱՐՄ» ՍՊԸ-ի կողմից Մեծամոր համայնքի Նոր Արտագերս բնակավայրում կրթահամալիրի կառուցման աշխատանքներին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՆՈՒՆԵ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՇՄԱՎՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**Համայնքի ղեկավար՝** **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 մարտի 2025 թվականի N 48-Ա

## ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, 11-րդ հոդվածը, 13-րդ հոդվածի 10-րդ մասը, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Մեծամոր համայնքում սկսել 2025թ-ի մասնակցային բյուջետավորման գործընթաց:

2. Մեծամոր համայնքի 2025 թ-ին բյուջեում հատկացնել 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ գումար՝ 2025 թ-ի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով:

3. Սահմանել մասնակցային բյուջետավորման առաջարկների նախնական գնահատման աղյուսակի ձևաթուղթը՝ համաձայն հավելվածի:

4. Սահմանել, որ քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների առնվազն մեկ տոկոսի կողմ ձայների դեպքում առաջարկ-նախագիծը համարվում է հաղթած:

5. Համայնքի ղեկավարին՝

1) սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2025-2027թթ-ի ՄԺԾԾ-ում, տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում:
2) համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված

առաջարկը(ները) ներկայացնել ավագանուն:
3) իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՆՈՒՆԵ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՇՄԱՎՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**Համայնքի ղեկավար՝** **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

**ՁԵՎԱՆՄՈՒՇ**

Հաստատված է
Մեծամոր համայնքի ավագանու
«21» մարտի 2025 թ-ի N 048-Ա որոշմամբ

**ԱՂՅՈՒՍԱԿ**
**ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ**

| N | Առաջարկի անվանումը | ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ | | | | | | Տեղափոխվել է հանրային քննարկումների և լսումների փուլ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Իրականացվելու է համայնքի տարածքում | Իրականացվելու է տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների շրջանակում | Իրականացման բյուջեն չի գերազանցում ավագանու հատկացրած սահմանաչափը | Հանդիսանում է նոր առաջարկություն[1] | Տեխնիկապես հնարավոր է իրականացնել | Համապատասխանում է ավագանու սահմանած առաջնահերթություններին | |
| 1 | | Բավարարում է/ չի բավարարում | Բավարարում է/ չի բավարարում | Բավարարում է/ չի բավարարում | Բավարարում է/ չի բավարարում | Բավարարում է/ չի բավարարում | Բավարարում է/ չի բավարարում | Այո/ոչ |
| 2 | | | | | | | | |
| 3 | | | | | | | | |

(այդ թվում՝ համայնքի տվյալ տարվա բյուջեով նախատեսված այլ ծրագրերի հետ առաջարկ-նախագծերի համընկնման բացառման) և ներկայացվող յուրաքանչյուր առաջարկ-նախագծի իրականացման համար անհրաժեշտ գումարի առավելագույն սահմանաչափը:

[1] Առաջարկը իրականացման փուլում չէ, ընդգրկված չէ համայնքի միջնաժամկետ ծախսային ծրագրում, տվյալ տարվա աշխատանքային պլանում և բյուջեում, չի իրականացվելու այլ կազմակերպությունների կողմից:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 մարտի 2025 թվականի N 47-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 195-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 195-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Եկամտային մասով.

ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներին /սուբվենցիաներ/ ավելացնել 23118,6 հազար ՀՀ դրամով:

բ) Պետական բյուջեից վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներին /սուբվենցիաներ/ ավելացնել 5229,3 հազար ՀՀ դրամ:

գ) Այլ եկամուտներ տողն ավելացնել 35757,5 հազար ՀՀ դրամով (տող 1393):

2. Ծախսային մասով.

01-1-1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ) նախահաշվի

5122 (Վարչական սարքավորումներ) հոդվածին ավելացնել 5000.0 հազար ՀՀ դրամ:

01-6-1 (Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) նախահաշվի

4269 (Հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածին ավելացնել 2000.0 հազար ՀՀ դրամ:

05-6-1 (Շրջակա միջավայրի պաշտպանություն) նախահաշվի

5113 (Շենքների և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածին ավելացնել 10050.0 հազար ՀՀ դրամ:

06-1-1 (Բնակարանային շինարարություն) նախահաշվի

5411 (Հող) հոդվածին ավելացնել 3230.0 հազար ՀՀ դրամ:

06-3-1 (Ջրամատակարարում) նախահաշվի

4212 (Էներգետիկ ծառայություններ) հոդվածից պակասեցնել 3000.0 հազար ՀՀ դրամ,

5112 (Շենքների և շինությունների կառուցում) հոդվածին ավելացնել 96668.6 հազար ՀՀ դրամ:

06-4-1 (Փողոցների լուսավորում) նախահաշվի

5112 (Շենքների և շինությունների կառուցում) հոդվածից պակասեցնել 91830.0 հազար ՀՀ դրամ:

09-1-1 (նախադպրոցական կրթություն) նախահաշվի

4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին ավելացնել 39112.8 հազար ՀՀ դրամ:

09-5-1 (Արտադպրոցական դաստիարակություն) նախահաշվի

4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին ավելացնել 1874.0 հազար ՀՀ դրամ:

10-7-1 (Սոցիալական հատուկ արտոնություններ) նախահաշվի

4819 (Նվիրատվություններ շահույթ չհետապնդող կազմակերպություններին) հոդվածին ավելացնել 1000.0 հազար ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՆՈՒՆԵ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՇՄԱՎՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**Համայնքի ղեկավար՝** **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 մարտի 2025 թվականի N 46–Ա

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28–Ի N 10 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 4–րդ մասով և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ հիմնադրելու և կանոնադրությունը հաստատելու մասին Մեծամոր համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N 10 որոշման մեջ կատարել փոփոխություն:

2. Որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշման 1-ին կետով հաստատված կանոնադրությունը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ պետական գրանցման:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՆՈՒՆԵ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՇՄԱՎՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**Համայնքի ղեկավար՝** **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

*Հավելված*
*ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ավագանու 2025թ. մարտի 21-ի N 46-Ա որոշման*

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**1.** Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր (այսուհետ՝ համայնք) համայնքապետարանի աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ) իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող համայնքային կառավարչական հիմնարկ է, որի միջոցով համայնքի ղեկավարը և օրենքով ու համայնքի ավագանու (այսուհետ՝ ավագանի) կանոնակարգով նախատեսված դեպքերում նաև ավագանին կազմակերպում են իրենց գործունեությունը:

**2.** Աշխատակազմը հանդիսանում է «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ալաշկերտի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալիճի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեշատի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արազափի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արգավանդի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտաշարի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական», «Հայաստանի Հանրապեըության Արմավիրի մարզի Բերքաշատի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գետաշենի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական», «Հայաստանի

Հանրապետության Արմավիրի մարզի Երասխահունի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զարթոնքի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկավանի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մարգարայի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաշատի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նալբանդյանի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Արտագերսի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Կեսարիայի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորապատի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շենավանի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդայի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրաշենի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վարդանաշենի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տարոնիկի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փշատավանի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական» հիմնարկների իրավահաջորդը:

**3**. Աշխատակազմն իր գործունեությունն իրականացնում է համայնքային ծառայողների, ինչպես նաև անձնակազմի լիազորությունների կատարման համար անհրաժեշտ տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց միջոցով:

Աշխատակազմում իրականացվում է համայնքային ծառայություն, որը կարգավորվում է «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով:

**4.** Ավագանին և համայնքի ղեկավարն Աշխատակազմի միջոցով համայնքում իրականացնում են օրենքով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորությունները, համակարգում համայնքի ենթակայության հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունը, կազմակերպում հանրապետական գործադիր մարմինների և դրանց համապատասխան տարածքային ծառայությունների հետ հարաբերությունները:

**5.** Աշխատակազմը ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է ավագանու որոշմամբ:

**6.** Աշխատակազմի լիազորությունները սահմանվում են օրենքներով, այլ իրավական ակտերով, այդ թվում՝ ավագանու որոշումներով, համայնքի ղեկավարի որոշումներով ու կարգադրություններով, ինչպես նաև սույն կանոնադրությամբ:

**7.** Աշխատակազմը գործում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այլ օրենքների ու իրավական ակտերի, սույն կանոնադրության հիման վրա:

**8.** Աշխատակազմն իր իրավասության սահմաններում կարող է համայնքի անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

**9.** Աշխատակազմը կազմված է կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներից:

**10.** Աշխատակազմի նպատակն ու խնդիրը համայնքի ղեկավարի և ավագանու՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին համայնքի ղեկավարի մասնակցության ապահովումն է:

**11.** Աշխատակազմի պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում համայնքը:

**12.** Աշխատակազմն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվանմամբ հայերեն կլոր կնիք: Աշխատակազմն ունի նաև դրոշմակնիքներ, ձևաթղթեր այլ անհատականացման միջոցներ:

**13.** Աշխատակազմն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

**14.** Աշխատակազմը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Աշխատակազմի կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների համար կարող են գանձվել պետական և տեղական տուրքեր, տեղական վճարներ՝ օրենքով սահմանված չափով և կարգով:

**15.** Աշխատակազմն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

**16.** Աշխատակազմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է հաշվառման պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանման կողմից:

**17.** Աշխատակազմի անվանումն է՝

ա. հայերեն լրիվ՝ «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ:

բ. հայերեն կրճատ՝ «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ:

գ. ռուսերեն լրիվ՝ «Аппарат муниципалитета Мецамора Армавирской области Республики Армения» муниципальное административное учреждение

դ. ռուսերեն կրճատ՝ «Аппарат муниципалитета Мецамора Армавирской об ласти Республики Армения» МАУ

ե. անգլերեն լրիվ՝ «The staff of the Metsamor municipality of Armavir region of the Republic of Armenia» community administration office

զ. անգլերեն կրճատ՝ «The staff of the Metsamor municipality of Armavir region of the Republic of Armenia» CAO

**18.** Աշխատակազմի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, ք.Մեծամոր, Վարչական կենտրոն 2.4, փոստային դասիչն է՝ 0910, պաշտոնական համացանցային կայքի հասցեն՝ **http://mecamorcity.am/:**

## 2. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

**19.** Աշխատակազմի կառավարումն իրականացնում է համայնքի ղեկավարը՝ օրենքով, այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում:

**20.** Համայնքի ղեկավարը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել այլ պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

**21.** Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, Աշխատակազմի (մասնագետների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների), համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ներկայացուցչի (այսուհետ՝ վարչական ներկայացուցիչ), համայնքային բյուջետային հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:

**22. Համայնքի ղեկավարը՝**

Համայնքի ղեկավարն ընտրվում է օրենքի ուժով կամ ավագանու կողմից:

Համայնքի ղեկավար կարող է դառնալ ընտրության օրը 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող և ավագանու անդամ համարվող անձը:

Համայնքի ղեկավարն օրենքով սահմանված կարգով՝

1) հրավիրում և վարում է ավագանու նիստերը՝ սույն օրենքով և ավագանու կանոնակարգով սահմանված կարգով.
2) համայնքի ղեկավարը նորմատիվ իրավական ակտեր ընդունելուց հետո պարտավոր է երկօրյա ժամկետում այն ուղարկել համայնքի ավագանու անդամներին և փակցնել համայնքի ավագանու նստավայրում՝ բոլորի համար տեսանելի ու մատչելի տեղում: Պաշտոնական համացանցային կայք ունեցող համայնքներում սույն կետով նախատեսված նորմատիվ ակտերը երկօրյա ժամկետում տեղադրվում են կայքում.
3) համայնքի զարգացման ծրագրերը ներկայացնում է ավագանու հաստատմանը.
3.1) մշակում և ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի տարեկան աշխատանքային պլանը, դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունը.
4) հաստատում է աշխատակազմի գործավարության կարգը.
5) աշխատակազմի և համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների, կառուցվածքների վերաբերյալ որոշման նախագծերը և դրանցում առաջարկվող փոփոխությունները ներկայացնում է ավագանու հաստատմանը՝ սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքում.
6) համայնքային ծառայության մասով աշխատակազմի կառուցվածքների վերաբերյալ որոշման նախագիծը և դրանում առաջարկվող փոփոխությունները ներկայացնում է ավագանու հաստատմանը.
7) աշխատակազմի և համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ առևտրային և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշման

նախագծերն ու դրանցում առաջարկվող փոփոխությունները ներկայացնում է ավագանու հաստատմանը.

8) համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին որոշման նախագիծը ներկայացնում է ավագանու հաստատմանը.

9) համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ մարմինների և վերստուգիչ մարմինների կազմերի վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացնում է ավագանու հաստատմանը.

10) նշանակում և ազատում է համայնքային վարչական և համայնքային հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի քարտուղարին, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին.

11) համայնքի ավագանու որոշմամբ նշանակում և ազատում է համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին, բացառությամբ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների, որոնք նշանակվում են մրցույթի արդյունքներով: Համայնքի բնակավայրերում գտնվող համայնքային հիմնարկների, կազմակերպությունների ղեկավարներին պաշտոնի նշանակելիս և պաշտոնից ազատելիս խորհրդակցում է վարչական ղեկավարի հետ: Ավագանու կողմից երկու անգամ համաձայնություն չտալու դեպքում համայնքի ղեկավարը նշանակում է կատարում առանց համաձայնեցնելու ավագանու հետ:

11.1) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի կազմում ընդգրկված, 500-ից պակաս հաշվառված բնակիչ ունեցող բնակավայրում վարչական ղեկավար ունենալու կամ բնակավայրի վարչական ղեկավարի լիազորություններից բխող գործառույթների իրականացումը մեկ այլ բնակավայրի վարչական ղեկավարին վերապահելու մասին.

12) հանդես է գալիս տեղական հանրաքվե նշանակելու նախաձեռնությամբ.

12.1) օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ընդունում է տեղական հանրաքվե նշանակելու մասին որոշում.

12.2)ավագանու հաստատմանն է ներկայացնում տեղական հանրաքվեի նախապատրաստման և անցկացման ծախսերի ֆինանսավորման մասին որոշման նախագիծ.

13) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ.

14) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումներն ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ.

15) կնքում է Հայաստանի Հանրապետության համայնքների կամ այլ պետությունների համայնքների հետ պայմանագրերը, դրանք ներկայացնում է համայնքի ավագանու վավերացմանը: Ավագանու հաստատմանն է ներկայացնում միջհամայնքային միավորում ստեղծելու, ինչպես նաև համայնքների հիմնադրած միություններին անդամակցելու և դրանց անդամավճարները մուծելու մասին որոշման նախագծերը.

16) համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը.

17) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան՝

համայնքի քաղաքաշինական ծրագրային և հողաշինարարական փաստաթղթերը կամ դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջադրանքները հաստատելու մասին որոշում ընդունելու վերաբերյալ.

18) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օտարելու կամ օգտագործման տրամադրելու մասին.

18.1) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի սեփականություն հանդիսացող տարածքներում հաստատելու այն վայրերի ցանկը, որտեղ կթույլատրվի կայանել վաճառքի և վարձույթի նպատակով ավտոտրանսպորտային միջոցները.

19) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կազմում և Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների տարանցիկ հատվածների մասով (բացառությամբ Երևան քաղաքի)՝ պետական ճանապարհային մարմնի, իսկ երթևեկության անվտանգության մասով՝ պետական լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման.

20) համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում առաջարկ՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու վերաբերյալ.

21) համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի անվանման և վերանվանման ենթակա փողոցները, պողոտաները, հրապարակները, զբոսայգիները, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկներն ու կազմակերպությունները և օրենքով սահմանված կարգով ներկայացնում է գրանցման (բացառությամբ պատմամշակութային ու բնապատմական հուշարձանների).

22) սահմանում է շենքերի և շինությունների համարակալումը, տալիս է համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման թույլտվություն.

23) սահմանված կարգով տալիս է քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և մատուցելու թույլտվություն, ինչպես նաև համայնքի բնակավայրերում այդ թույլտվության տրամադրումը կարող է լիազորել վարչական ղեկավարին.

23.1) տալիս է համայնքի կամ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշները (զինանշան, անվանում) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն.

24) իր իրավասության շրջանակում ընդունում է որոշումներ, կազմում է արձանագրություններ և արձակում կարգադրություններ.

25) ներկայացնում է համայնքի շահերն այլ անձանց հետ փոխհարաբերություններում.

25.1) օրենքով նախատեսված դեպքերում որպես համայնքի ներկայացուցիչ հանդես է գալիս դատարանում, ինչպես նաև իր իրավասության սահմաններում տալիս է դատարանում հանդես գալու լիազորագրեր.

26) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության.

27) օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ կազմակերպում և ղեկավարում է պետության պատվիրակած լիազորությունների իրականացումը.
28) օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով վարում է համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրներ.
29) օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով մասնակցում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության, Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած՝ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների, ինչպես նաև բնածին և տեխնածին աղետների ռիսկերի նվազեցման ու հետևանքների վերացման, սեյսմիկ անվտանգության ապահովման հետ կապված աշխատանքների կազմակերպմանը և այդ ուղղությամբ ձեռնարկում համապատասխան միջոցներ.
30) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով նշանակումներ է կատարում Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններում, ինչպես նաև համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառում է խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.
31) օրենքով նախատեսված դեպքերում շնորհում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության դասային աստիճաններ, զրկում է դասային աստիճաններից.
32) ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ նշանակումներ է կատարում հայեցողական պաշտոններում:
33)համայնքի ղեկավարն իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.
ա. կազմակերպում է ավագանու և աշխատակազմի աշխատանքները,
բ. օրենքով սահմանված կարգով նշանակում և ազատում է աշխատակազմի քարտուղարին, համայնքային վարչական և համայնքային հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց, առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին,
գ. սահմանում է համայնքի շենքերի և շինությունների համարակալումը,
դ. ավագանուն է ներկայացնում համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման տարեկան ծրագիրը, դրան համապատասխան տնօրինում է համայնքի սեփականություն հանդիսացող գույքը,

ե. պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է համայնքային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներին,
զ. օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ կազմակերպում և ղեկավարում է պետության պատվիրակած լիազորությունների իրականացումը,
է. ամենամյա հաշվետվություններ է ներկայացնում հանրությանը ավագանու, իր գործունեության և համայնքի ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի մասին: Այդ հաշվետվությունները տեղադրվում են համայնքի պաշտոնական համացանցային կայքում,
ը. իրականացնում է համայնքի սեփականություն հանդիսացող ենթակառուցվածքների կառավարումը և ապահովում դրանց շահագործումը,

թ. օրենքով սահմանված սեփական այլ լիազորություններ:

34)Համայնքի ղեկավարն իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունները.

ա. օրենքով սահմանված կարգով լուծում է համայնքի տարածքում հավաքներ անցկացնելու հարցը.

բ. համայնքի տարածքում ճանապարհային երթևեկության կարգավորումը՝ ճանապարհային գծանշումների, ինչպես նաև երթևեկության նշանների և լուսացույցների (բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ժամանակավոր տեղադրվածների) տեղադրման միջոցով.

գ. օրենքով սահմանված կարգով մասնակցում է պետական սեփականություն հանդիսացող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների և մարզական կազմակերպությունների կառավարմանը.

դ. համայնքի տարածքում իրականացնում է պետական սոցիալական ապահովության ծրագրերը.

ե. իրականացնում է բնապահպանական պետական ծրագրերով նախատեսված աշխատանքները համայնքի տարածքում:

35)Համայնքի ղեկավարը պատասխանատու է վարչական ղեկավարի գործունեության համար.

36)իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

1) աշխատակազմի (այդ թվում առանձնացված ստորաբաժանումների) և բյուջետային հիմնարկների կանոնադրությունների, կառուցվածքների վերաբերյալ որոշման նախագծերը և դրանցում առաջարկվող փոփոխությունները ներկայացնում է ավագանու հաստատմանը,

5) իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

**23. Վարչական ղեկավարը՝**

1) վաչճական ղեկավարի պաշտոնը համայնքային վարչական պաշտոն է.

2)վարչական ղեկավարի լիազորությունները սահմանվում են օրենքով, իսկ գործառույթները՝ օրենքով և աշխատակազմի կանոնադրությամբ.

3) վարչական ղեկավարը տվյալ բնակավայրի հաշվառված բնակիչ է.

4) վարչական ղեկավարը գործում է համայնքի ավագանու որոշած նստավայրում.

5)վարչական ղեկավարի նստավայրի պահպանման, սիկ անհրաժեշտության դեպքում նաև վարչական ղեկավարի գործառույթների իրականացման ծախսերը առանձին տողով ներկայացվում են համայնքի բյուջեում.

6) 1000-ից ավելի հաշվառված բնակիչ ունեցող բնակավայրի վարչական ղեկավարը պետք է ունենա բարձրագույն կրթություն.

7)համայնքի ղեկավարի որոշմամբ նշանակվում է համապատասխան բնակավայրի վարչական ղեկավարի պարտականությունները ժամանակավորապես կատարող՝ նրա բացակայության ընթացքում.

8)բնակավայրի տարածքում գործում է համայնքի ղեկավարի անունից.

9) հետևում է բնակավայրի տարածքում մատուցվող հանրային ծառայությունների իրականացմանը և այդ մասին տեղեկություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին.

10) աջակցում և կազմակերպում է իր բնակավայրում օրենքով սահմանված կարգով համայնքի ավագանուն, համայնքի ղեկավարին և աշխատակազմի քարտուղարին վերապահված լիազորությունների իրականացումը.

11) համայնքի ավագանու սահմանած կարգին համապատասխան՝ անցկացնում է բնակավայրին վերաբերող հարցերի հանրային լսումներ կամ քննարկումներ և արդյունքների մասին տեղեկություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին.

12) մասնակցում է համայնքի ավագանու նիստերին.

13) առաջարկություններ է ներկայացնում ավագանու նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ.

13.1) առաջարկություն է ներկայացնում համայնքի ղեկավարին՝ բնակավայրում գտնվող համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու վերաբերյալ.

13.2) առաջարկություն է ներկայացնում համայնքի ղեկավարին՝ բնակավայրում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող գույքը օտարելու կամ օգտագործման տրամադրելու վերաբերյալ.

13.3) համայնքի ղեկավարի կողմից լիազորված լինելու դեպքում համայնքի ղեկավարի անունից տալիս է բնակավայրում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և մատուցելու թույլտվություն.

14)կազմակերպում է իր բնակավայրում ավագանու անդամի կողմից բնակիչների ընդունելությունը.

15)բնակավայրի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կազմակերպում վերջիններիս մասնակցությամբ միջոցառումներ՝ սահմանված իրավական ակտերով, ինչպես նաև ավագանու ընդունած՝ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին որոշմամբ.

16) պատասխանատվություն է կրում վարչական ներկայացուցչի նստավայրին հատկացված՝ Աշխատակազմին ամրացված, գույքի պահպանության համար.

17) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:



18) իրականացնում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և աշխատակազմի կանոնադրությամբ սահմանված այլ գործառույթներ.

19. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57–րդ հոդվածի համաձայն՝ համապատասխան ընտրակարգով ընտրվող ավագանի ունեցող համայնքներում համայնքի ղեկավարն ունի մեկ ***առաջին փեղակալ***, որն ավագանու անդամ է: Համայնքի ղեկավարը կարող է ունենալ ևս երկու տեղակալ:

**24. Համայնքի ղեկավարի առաջին տեղակալը՝** փոխարինում է համայնքի ղեկավարին վերջինիս բացակայության ժամանակ:

Համայնքի ղեկավարի տեղակալներին համայնքի ղեկավարի ներկայացմամբ նշանակում է ավագանին՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Համայնքի ղեկավարի

տեղակալի թեկնածությունը ավագանու կողմից երկու անգամ չհաստատվելու դեպքում վերջինս նշանակվում է համայնքի ղեկավարի կողմից:

Համայնքի ղեկավարի տեղակալին պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը:

**25. Համայնքի ղեկավարի տեղակալը՝**

1) համակարգում է համայնքի ենթակայության հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների աշխատանքները՝ համայնքի ղեկավարի կողմից իրեն հանձնարարված բնագավառներում.
2) Աշխատակազմի նպատակներին և խնդիրներին համապատասխան իրականացնում է իրեն հանձնարարված բնագավառների՝ Աշխատակազմին (մասնագետներին, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին) տրվող կոնկրետ հանձնարարականների և առաջադրանքների սահմանում, դրանց կատարման նկատմամբ վերահսկողություն.
3) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է ավագանու և համայնքի ղեկավարի մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումներ.
4) համակարգում է իրեն հանձնարարված բնագավառներում Աշխատակազմի (մասնագետների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների), ինչպես նաև համայնքի ենթակայության հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրությունները և աշխատանքների ընթացքի օպերատիվ վերլուծությունը.
5) իր լիազորությունների սահմաններում համագործակցում է պետական կառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հետ.
6) իրեն հանձնարարված բնագավառներում համակարգում է համապատասխան զարգացման ծրագրերի մշակման ու իրականացման աշխատանքները.
7) պարբերաբար համայնքի ղեկավարին է ներկայացնում տեղեկատվություն իրեն հանձնարարված բնագավառներում տիրող վիճակի մասին.
8) ապահովում է իրեն հանձնարարված բնագավառներում ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների ու կարգադրությունների կատարման նկատմամբ վերահսկողությունն ու արդյունքների մասին տեղեկացնում համայնքի ղեկավարին.
9) համայնքի ղեկավարին և Աշխատակազմի քարտուղարին ներկայացնում է առաջարկություններ վերջիններիս իրավասությանը վերապահված հարցերի վերաբերյալ.
10) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:

11) համայնքի ղեկավարի տեղակալներն իրականացնում են համայնքապետարանի կանոնադրությամբ իրենց վերապահված գործառույթներ.
12) համայնքի ղեկավարի տեղակալն օրենքով նախատեսված դեպքերում որպես համայնքի ներկայացուցիչ հանդես է գալիս դատարանում, ինչպես նաև իր իրավասության սահմաններում տալիս է դատարանում հանդես գալու լիազորագրեր.
13) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ համայնքի ղեկավարի տեղակալները կարող են իրականացնել նաև այլ գործառույթներ.
14) համայնքի ղեկավարի տեղակալները չեն կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել այլ պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

**26.** Համայնքի ղեկավարի տեղակալը փոխարինում է համայնքի ղեկավարին վերջինիս բացակայության ժամանակ:

**27.** Համայնքի ղեկավարի տեղակալին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը:

**28.** Համայնքի ղեկավարը կարող է ունենալ խորհրդականներ, օգնականներ, մամուլի քարտուղար, ռեֆերենտ, որոնց միջև պարտականությունների բաշխումը կատարում է համայնքի ղեկավարը:

**29. Համայնքի ղեկավարի խորհրդականը՝**

1) համաձայնեցնելով համայնքի ղեկավարի հետ՝ կազմում է իր աշխատանքային ծրագիրը.
2) պարբերաբար համայնքի ղեկավարին է ներկայացնում զեկուցումներ, անհրաժեշտ վերլուծական նյութեր իրենց հանձնարարված բնագավառներում տիրող իրավիճակի, երևույթների և իրադարձությունների մասին և առաջարկություններ առկա հիմնահարցերի լուծման վերաբերյալ.
3) կազմակերպում է քաղաքացիների ընդունելություն.
4) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում՝ իրեն հանձնարարված բնագավառներին վերաբերող հարցերի քննարկմանը.
5) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ հրավիրում է խորհրդակցություններ, կազմակերպում իրեն հանձնարարված հարցերի քննարկումներ.
6) կատարում է համայնքի ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարականներ:

**30. Համայնքի ղեկավարի օգնականը՝**

1) կազմակերպական, տեղեկատվական և տեխնիկական աջակցություն է ցուցաբերում համայնքի ղեկավարին.
2) համաձայնեցնելով համայնքի ղեկավարի հետ՝ կազմակերպում է համայնքի ղեկավարի ընթացիկ և հեռանկարային աշխատանքների ծրագրերի նախապատրաստումը և դրանք ներկայացնում համայնքի ղեկավարին.
3) կազմակերպում է համայնքի ղեկավարի խորհրդակցությունների, հանդիպումների, այցերի և ուղևորությունների նախապատրաստումը.
4) համագործակցելով Աշխատակազմի (մասնագետների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների) հետ՝ համայնքի ղեկավարի համար նախապատրաստում է տեղեկատվական և վերլուծական նյութեր.
5) նախապատրաստում և համայնքի ղեկավարին է ներկայացնում առաջարկություններ աշխատանքային ծրագրերի վերաբերյալ.
6) կատարում է համայնքի ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարականներ:

**31. Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղարը՝**

1) համայնքի ղեկավարի պաշտոնական տեսակետները ներկայացնում է տեղեկատվության միջոցներին.
2) անցկացնում է ասուլիսներ և ճեպազրույցներ.
3) իր գործունեության ծրագրման և իրականացման վերաբերյալ առաջարկություններ ու վերլուծություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին և համայնքի ղեկավարի հետ համաձայնեցնելուց հետո հետևում դրանց իրականացմանը.
4) կազմակերպում է համայնքի ղեկավարի հարցազրույցները, ասուլիսները և հանդիպումները մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների ներկայացուցիչների հետ.

5) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ հանդես է գալիս հայտարարություններով, պարզաբանումներով, հերքումներով.
6) կատարում է համայնքի ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարականներ:

**32. Համայնքի ավագանին՝** գործում է իր կանոնակարգին համապատասխան՝ նիստերի, հանձնաժողովների, խմբակցություններիաշխատանքի միջոցով: Ավագանու նիստերն արձանագրվում են: Այդ արձանագրությունները մեկշաբաթյա ժամկետում ենթակա են տեղադրման հաև համայնքի պաշտոնական համացանցային կայքում:

Համայնքի ավագանին՝

1) ընդունում է իր կանոնակարգը՝ սույն օրենքի պահանջներին համապատասխան.
2) օրենքով սահմանված դեպքերում և կարգով ընտրում է համայնքի ղեկավարին.
3) օրենքով սահմանված կարգով որոշում է ընդունում համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու վերաբերյալ.
4) հաստատում է համայնքի զարգացման ծրագրերը.

4.1) հաստատում է համայնքի տարեկան աշխատանքային պլանը, դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունները.

4.2) համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի կազմում ընդգրկված, 500-ից պակաս հաշվառված բնակիչ ունեցող բնակավայրերում վարչական ղեկավար ունենալու կամ բնակավայրի վարչական ղեկավարի լիազորություններից բխող գործառույթների իրականացումը մեկ այլ բնակավայրի վարչական ղեկավարին վերապահելու մասին.

4.3) համայնքի ղեկավարի առաջարկությամբ հաստատում է համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման (համայնքային ենթակայության ճանապարհների մասով).

4.4) որոշում է տեղական ինքնակառավարման մարմինների և վարչական ղեկավարների նստավայրերը.

5) հաստատում է համայնքի բյուջեն, բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները և բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.

6) վերահսկում է համայնքի բյուջեի կատարումը և համայնքի ստացած վարկերի ու այլ ներգրավված ֆինանսական միջոցների օգտագործումը.

7) սահմանում է համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղվա ծ սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ.

8) իր անդամների առնվազն մեկ երրորդի կամ համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ ընդունում է հանրաքվե անցկացնելու մասին որոշում.

8.1) համայնքի ղեկավարի ներկայացմամբ ընդունում է տեղական հանրաքվեի նախապատրաստման և անցկացման ծախսերի ֆինանսավորման մասին որոշում.

9) վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ.
10) դատական կարգով կարող է վիճարկել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին և համայնքի ավագանու որոշումներին հակասող՝ համայնքի ղեկավարի որոշումները.
11) որոշում է համայնքի ղեկավարի վարձատրության չափը.
12) որոշում է կայացնում միջհամայնքային միավորումներ ստեղծելու մասին, ինչպես նաև առաջարկություն է ներկայացնում պետական լիազորված մարմին՝ այլ համայնքների հետ միավորվելով նոր համայնք ձևավորելու վերաբերյալ.

13) որոշում է կայացնում միջհամայնքային միավորումում իր ներկայացուցիչը նշանակելու վերաբերյալ.

14) որոշում է կայացնում կամ կազմում արձանագրություն համայնքի ղեկավարի և ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ.

15) օրենքով սահմանված կարգով որոշում է կայացնում համայնքային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հիմնադրման, վերակազմակերպման կամ լուծարման մասին.

16) իր որոշմամբ համաձայնություն է տալիս համայնքի ղեկավարի ներկայացրած՝ համայնքային հիմնարկների ղեկավարների թեկնածուներին.

17) օրենքով սահմանված կարգով և դեպքերում հաստատում է համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների և վերստուգիչ մարմինների կազմերը:

18) օրենքով սահմանված դեպքերում սահմանում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը.

18.1) համայնքի ղեկավարի առաջարկությամբ համայնքի սեփականություն հանդիսացող տարածքներում հաստատում է այն վայրերի ցանկը, որտեղ թույլատրվում է վաճառքի և վարձույթի նպատակով կայանել ավտոտրանսպորտային միջոցները.

19) սահմանում է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը.

20) իրականացնում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորություններ.

21)համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու կամ օտարելու վերաբերյալ՝ սահմանելով օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը:

22)հաստատում է համայնքի զինանշանը.

23) համայնքի ղեկավարի ներկայացմամբ որոշում է ընդունում աշխատակազմի, համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները, կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու, փոփոխելու կամ լրացնելու վերաբերյալ:

24) որոշում է ընդունում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջադրանքները հաստատելու մասին՝ «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.

25) օրենքով սահմանված դեպքերում հաստատում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը.

26) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով որոշում է ընդունում համայնքի հողերի օգտագործման սխեմաները հաստատելու մասին.

27) հաստատում է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը.

28) պետական լիազորված մարմին առաջարկություն է ներկայացնում կամ համաձայնություն է տալիս համայնքի կամ համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրի անվանափոխության վերաբերյալ.

29) քննարկում և որոշում է կայացնում համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի, անվանումների ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ.

30)սահմանում է այն շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները, որտեղ իրականացվում կամ մատուցվում են քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ.

31) որոշում է աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը.

32)հաստատում է աշխատակազմի կանոնադրությունը, կառուցվածքը, հաստիքացուցակը և աշխատակիցների թվաքանակը.

33)սահմանում է համայնքի ղեկավարի, նրա տեղակալի, խորհրդականի, օգնականի, մամուլի քարտուղարի, վարչական ներկայացուցչի, աշխատակազմի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը:

34) իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով սահմանված այլ լիազորություններ:

**33.**Աշխատակազմի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Աշխատակազմի քարտուղարը:

**34. Աշխատակազմի քարտուղարը՝**

Աշխատակազմի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է աշխատակազմի քարտուղարը՝ օրենքով, իրավական այլ ակտերով, համայնքի ղեկավարի որոշումներով, աշխատակազմի կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում կամ գործառույթների շրջանակում, մասնավորապես՝

1) ապահովում է համայնքի ավագանու նիստերի նախապատրաստումը, արձանագրումը և նիստին ներկա ավագանու անդամների կողմից արձանագրության վավերացումը.

2) կազմակերպում և ապահովում է աշխատակազմի աջակցությունն ավագանու անդամների կողմից համայնքի ավագանու որոշման նախագծերի նախապատրաստմանը.

3) ապահովում է աշխատակազմի գործավարության, նամակագրության և արխիվային գործի վարումը.

4) կազմակերպում և ապահովում է համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների նախագծերի նախապատրաստումը.

5) ապահովում է ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների և ուղերձների հրապարակումը.

6) կազմակերպում է համայնքի ղեկավարի և ավագանու կողմից քաղաքացիների ընդունելությունը, հսկողություն է իրականացնում նրանց հանրագրերի, դիմումների ու բողոքների քննարկման և ընթացքի նկատմամբ.

7) համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կազմակերպում վերջիններիս մասնակցությամբ միջոցառումներ՝ սահմանված սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության և հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման կարգերով.

8) վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների կատարման, ինչպես նաև աշխատակազմի աշխատանքային կարգապահության պահպանման նկատմամբ.
9) ապահովում է ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների առաքումը համապատասխան մարզպետարան՝ յոթնօրյա ժամկետում.
10) օրենքով, իրավական այլ ակտերով կամ աշխատակազմի կանոնադրությամբ նախատեսված իր լիազորությունների սահմաններում կամ գործառույթների շրջանակում նշանակում և ազատում է աշխատակազմի աշխատողներին, այդ թվում՝ տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.
11) օրենքով, նորմատիվ իրավական այլ ակտերով և աշխատակազմի կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների և գործառույթների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ.
12) օրենքով, այլ իրավական ակտերով, համայնքի ղեկավարի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է աշխատակազմի ընթացիկ գործունեությունը և կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար.
13) իր իրավասության շրջանակում իրականացնում է աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների աշխատանքների համակարգումը.
14) կազմակերպում է համայնքի քաղաքացիների ընդունելությունը, նրանց առաջարկությունների, դիմումների ու բողոքների սահմանված կարգով քննարկումը, ինչպես նաև՝ աշխատակազմի գործավարության և տեխնիկական սպասարկման աշխատանքները.
15) կազմակերպում և ապահովում է համայնքապետարանի աշխատակազմի աջակցությունն ու ավագանու անդամների կողմից որոշման նախագծերի նախապատրաստմանը.
16) համայնքի ղեկավարի կարգադրությունների և որոշումների, ավագանու որոշումների գրանցումը, հաշվառումը՝ էջակալված և կնքված հատուկ մատյաններում.
17) համայնքի ղեկավարի ստորագրությանն է ներկայացնում համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների նախագծերը.
18) ապահովում է աշխատակազմում «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան՝ անձնակազմի կառավարման հետ կապված գործառույթների իրականացումը.
19) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով նշանակումներ է կատարում աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառում խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.
20) օրենքով սահմանված դեպքերում շնորհում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության դասային աստիճան, զրկում համայնքային ծառայության դասային աստիճանից.
21) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է աշխատակազմի տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց, նրանց նկատմամբ կիրառում խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.

22) օրենքով, իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ենթակա ցուցումներ.

23) մասնակցում է աշխատակազմի կառուցվածքային, հաստիքային, ինչպես նաև համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ կատարելու նախապատրաստման աշխատանքներին և ապահովում դրանց կատարումը.

24) ապահովում է աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերի, դրանցում փոփոխություններ կատարելու նախագծերի մշակման աշխատանքների իրականացումը.

25) սահմանված կարգով ապահովում է աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի և այդ պաշտոնները զբաղեցնող համայնքային ծառայողների ատեստավորման նախապատրաստական աշխատանքների իրականացումը.

26) իրեն անմիջական ենթակա և հաշվետու համայնքային ծառայողների կողմից իրենց կատարած աշխատանքների մասին ներկայացրած կիսամյակային հաշվետվությունների վերաբերյալ տալիս է համապատասխան եզրակացություններ.

27) իրականացնում է օրենքով, նորմատիվ իրավական այլ ակտերով և աշխատակազմի կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ, համայնքի ղեկավարի հանձնարարություններ.

28)Աշխատակազմի քարտուղարի բացակայության կամ պաշտոնական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինելու հարցը կարգավորվում է «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

**35.** Աշխատակազմի գլխավոր ֆինանսիստն Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետն է:

**36. Գլխավոր ֆինանսիստը՝**

1)ղեկավարում է Աշխատակազմի ֆինանսական և հաշվապահական ծառայությունները, գործում է համայնքի ղեկավարի անմիջական հանձնարարականներով և իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով իր վրա դրված լիազորությունները.

2)իր իրավասությունների սահմաններում պատասխանատու է համայնքի բյուջեի նախագծի կազմման, հաշվապահական հաշվառումը վարելու, Աշխատակազմի ֆինանսական (բյուջետային), հարկային, վիճակագրական, պարտադիր վճարների մասին հաշվետվությունները ժամանակին կազմելու համար:

## 3. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՒՅՔԸ

**37.**Աշխատակազմի գույքը օրենքով սահմանված կարգով ձևավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից համայնքի սեփականությանը փոխանցված և (կամ) համայնքի սեփականությունը համարվող գույքից, համայնքի բյուջեի հաշվին ձեռք բերված գույքից, բարեգործական հատկացումներից, քաղաքացիների, հիմնարկների և կազմակերպությունների նվիրատվություններից և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

**38.** Աշխատակազմի գույքը հաշվառվում է նրա հաշվեկշռում և ենթակա է ամենամյա

գույքագրման:
**39.** Աշխատակազմն իրավունք ունի օրենքով, այլ իրավական ակտերով և իր կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, իր գործունեության նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան օգտագործելու և տիրապետելու իրեն հանձնված գույքը:

## 4. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

**40.** Համայնքի ղեկավարն իր պաշտոնը ստանձնելու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում, մշակում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում աշխատակազմի, ինչպես նաև համայնքային բյուջետային հիմնարկների կանոնադրությունները, կառուցվածքները /համապատասխան ստորաբաժանումներ նախատեսված լինելու դեպքում/, ինչպես նաև աշխատակիցների քանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը: Համայնքի նոր ղեկավարի լիազորությունները ստանձնելուց հետո համայնքային վարչական և համայնքային հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձինք շարունակում են կատարել իրենց պարտականությունները մինչև այդ պաշտոններում նոր նշանակումներ կատարվելը: Համայնքի ղեկավարը աշխատակազմի և հիմնարկների կառուցվածքը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը ավագանու կողմից հաստատվելուց/վերահաստատվելուց/ հետո՝ մեկամսյա ժամկետում, նշանակումներ է կատարում համայնքային վարչական և համայնքային հայեցողական պաշտոններում: Աշխատակազմի կառուցվածքում կարող են նախատեսվել միայն «բաժին» տեսակի կառուցվածքային ստորաբաժանումներ, որոնց հաստիքային միավորների նվազագույն թվաքանակը սահմանում է պետական լիազորված մարմինը:
**41.** Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներն, ինչպես նաև բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպություններն ունեն կանոնադրություններ, որոնք համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատվում են համայնքի ավագանու կողմից:

## 5. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲԱԺԻՆՆԵՐԸ

**42.** Աշխատակազմի բաժիններն ապահովում են համայնքի ղեկավարի լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը՝ իրենց մասնագիտական ուղղվածությանը համապատասխան:
**43.** Աշխատակազմի բաժինները գլխավորում են բաժնների պետերը, որոնք ենթակա և հաշվետու են համայնքի ղեկավարին և աշխատակազմի քարտուղարին:
**44.** Բաժինների պետերին անմիջականորեն ենթակա և հաշվետու են բաժինների աշխատակիցները:
**45.** Աշխատակազմի յուրաքանչյուր բաժին անհրաժեշտության դեպքում օժանդակում է մյուս բաժիններին իրենց կանոնադրական լիազորություններն իրականացնելու գործում:
**46.** Աշխատակազմի բաժինները կարող են ունենալ առանց Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերի դրոշմակնիք և ձևաթուղթ:
**47. Բաժինների պետերը՝**
1) կազմակերպում են բաժնի աշխատանքները, իրենց իրավասության շրջանակներում տալիս են հանձնարարականներ բաժնի աշխատակիցներին և վերահսկում դրանց ժամանակին և պատշաճ որակով կատարումը.

2) Աշխատակազմի քարտուղարին ներկայացնում են բաժնի աշխատանքային ծրագրերը, անհրաժեշտության դեպքում՝ բաժնի լիազորությունների սահմաններում նախապատրաստում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, միջնորդագրեր և այլ գրություններ.
3) անհրաժեշտության դեպքում՝ համայնքի ղեկավարի և (կամ) Աշխատակազմի քարտուղարի համաձայնությամբ և հանձնարարությամբ, մասնակցում են համայնքապետարանի և (կամ) այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին, այդ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանալով բաժնի առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր.
4) ստորագրում են իրենց և բաժնի անունից պատրաստվող փաստաթղթերը.
5) համայնքի ղեկավարի և (կամ) Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ ապահովում են իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի մշակումը և նյութերի փորձաքննությունը.
